ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/52

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝ Ա. Գրիգորյանի, Ղ. Գրիգորյանի,
«Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Առաքելյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Արթիկ համայնքի մի շարք բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման ծառայության ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 08.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովին դադարեցնել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:
2. Պարտավորեցնել «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հաղթող ճանաչել «Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 08.04.2022թ.-ին:

11.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/52 համարի ծածկագիրը:

20.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. «Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն 08.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արթիկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է Արթիկ համայնքի Լեռնակերտ, Գեղանիստ, Հոռոմ, Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ և Հայրենաց բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծեռք բերման նպատակով թիվ ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բցու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն:

Հայտերի բացումը տեղի է ունեցել 29.03.2022թ.-ին՝ էլեկտրոնային եղանակով: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 2 մասնակից:

1. *«Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ*
2. *«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ*

Հայտերի բացման նիստից հետո կազմված Արձանագրություն 01.04.2022թ. N 3-ով մասնակիցները հրավիրված են եղել բանակցությունների հստակ հասցեով՝ Արթիկ համայնք, Ազատության հրպ. 1 հասցեում գտնվող Արթիկի համայնքապետարանի շենքի առաջին հարկի դահլիճում՝ 04.04.2022թ. ժամը՝ 12:00-ին:

Տեղեկացնում ենք, որ նշված օրը և ժամին բանակցություններին ներկա է գտնվել միայն «Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, և հիշատակված օրը ժամը 12:00-ին նիստը համարվել է սկսված: Գնային առաջարկի հարցմանն ի պատասխան մասնակիցն առաջարկել է 4 690 000 (չորս միլիոն վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, որից հետո գնահարցման շուրջ բանակցությունները համարվել են ավարտված, ըստ էության մեր կողմից առաջարկված գինը որպես վերջնական գին ընդունելով: Պետք է փաստել, որ հանձնաժողովի կողմից մյուս մասնակցի («ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ) բանակցություններին մասնակցության վերաբերյալ տեղեկություն չի տրամադրվել, ինչպես նաև չեն տեղեկացվել նրա կողմից ծանուցում ուղարկելու մասին:

Այնուհետև, հանձնաժողովի կողմից ներկայացվել է գրություն, առ այն, որ «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն artikgnumner@mail.ru էլ. հասցեին, նույն օրը ժամը 12:26-ին ներկայացրել է չներկայանալու պատճառներ և գնային առաջարկ, որը հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը կազմել է N 5 արձանագրությունը, որով հաղթող է ճանաչվել «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման

հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը յրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Հայտնում եմ, որ հայտերի բացման նիստից հետո կազմված Արձանագրություն 01.04.2022թ. N 3-ով մասնակիցները հրավիրված են եղել բանակցությունների հստակ հասցեով՝ Արթիկ համայնք, Ազատության հրպ. 1 հասցեում գտնվող Արթիկի համայնքապետարանի շենքի առաջին հարկի դահլիճում՝ 04.04.2022թ. 12:00-ին, սակայն բանակցություններին ներկա է գտնվել միայն «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Նիստն սկսվել է Արձանագրություն 01.04.2022թ. N 3-ով սահմանված ժամին՝ 12:00-ին, և նիստին ներկա գտնված միակ մասնակիցը ներկայացրել է գնային առաջարկ 4 690 000 (չորս միլիոն վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգը գնահատող հանձնաժողովը, խախտելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ. պարբերության պահանջները, հաղթող է ճանաչել բանակցություններին չներկայացած և դրա վերբերյալ չծանուցած «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ին, ով իր դիրքորոշումը հայտնել է միայն բանակցությունների ավարտին, ժամը 12:26- ին artikgnumner@mail.ru էլ. Հասցեին ուղարկելով գնային առաջարկը:

Նման փաստական հանգամանքներում ակնհայտ է, որ «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված մի շարք դրույթներ:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովին դադարեցնել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հաղթող ճանաչել «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ին:

3. <u>ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6249-2022 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 08.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 21.04.2022թ.-ին գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով անհրաժեշտ փաստաթղթերը՝ ներկայացնելով բողոքի հիմքերի ու փաստական հանգամանքների վերաբերյալ գրավոր դիրքորոշում.

«ՀՀ ՇՄ Արթիկի համայնքապետարանի կողմից հայտարարվել է ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10 ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 2 ընկերություն «Բլյու սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն:

Հայտերի բացումը տեղի է ունեցել 29.03.2022թ.-ին էլեկտրոնային եղանակով:

Արթիկի համայնքապետարանի կողմից 01.04.2022թ. կազմված N3 արձանագրությամբ հրավիրվել են բանակցություններ 04.04.2022թ. ժամը 12:00-ին: Մասնակիցների կողմից սկզբնական գին է առաջարկվել համապատասխանաբար «Բլյու

սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 5.500.000 /հինգ միլիոն հիմգ հարյուր հազար/ ՀՀ դրամ և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի կողմից 4.700.000 /չորս միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Բանակցությունների համար սահմանված օրը ներկայացել է «Բլյու սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի լիազորված անձը: Բանակցությունները սկսվել են ժամը 12:10, քանի որ գնահատող հանձնաժողովը սպասել է «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի ներկայացուցչին: Ապա կապ է հաստատել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի հետ, որի ներկայացուցիչը նշել է, որ չի ներկայանալու անձամբ տեղի ունեցած դեպքի պատճառով, իսկ բանակցային գնային առաջարկը կներկայացնի էլեկտրոնային եղանակով: Ժամը 12:15 սահմաններում «Բլյու սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի լիազորված անձը ներկայացրեց իր բանակցային գնային առաջարկը 4690000 /չորս միլիոն վեց հարյու իննսուն հազար/ ՀՀ դրամ: Այնուհետ 12:26-ին պաշտոնական կայքով «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց բանակցային գնային առաջարկը օրենքով սահմանված կարգով ստորագրված և կնիքված տարբերակով, նախապես տեղյակ պահելով, որ այն իր վերջնական չափն է: Գնային առաջարկ ներկայացվել է 3.200.000 ՀՀ /երեք միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով: Իսկ «Բլյու սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն ծանոթանալով «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանակցային գնային առաջարկին, ներկայացրեց, որ 4.690.000 /չորս միլիոն վեց հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամից պակաս գնային առաջարկ չի ներկայացնելու, որը 1.490.000 ՀՀ դրամով ավել էր «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկից: «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի բանակցային գնային առաջարկից հետո «Բլյու սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի լիազորված անձը հրաժարվել է ավելի ցածր գնային առաջարկ ներկայացնել: Բանակցությունները ավարտվել են 13:00-ին և կազմվել է համապատասխան արձանագրություն: Հաղթող է ճանաչվել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն, քանի որ ներկայացրել է ավելի ցածր բանակցային գին:

Արթիկի համայնքապետարանը պահպանել է գնման ընթացակարգի և բնակացությունների վարման համար օրենքով սահմանված բոլոր պահանջները և տրամաբանական չէր լինի եթե համայնքապետարանը հաթող ճանաչեր այն մասնակցին որը ներկայացրել էր 1.490.000 ՀՀ դրամի չափով բարձր գնային առաջարկ, հաշվի առնելով մասնակցի զուտ փաստացի ներկայությունը:

Այսպիսով գտնում եմ, որ «Բլյու սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման:

Կից ներկայացվում է ՇՄՀ-ԳՀԽԾՁԲ-22/10 ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից Արթիկ համայնքի մի շարք բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման ծառայության ձեռքբերման նպատակով 22.03.2022թ.-ին հայտարարվել է «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ են ներկայացրել նաև «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ, որը տեղի կունենան 04.04.2022թ.-ին:

v. Հանձնաժողովի 04.04.2022թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ բանակցություններին ներկայացել է «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն, իսկ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն չի ներկայացել, սակայն բանակցային գնային առաջարկը ներկայացրել է Արթիկ համայնքի էլեկտրոնային artikgnumner@mail.ru հասցեին ժամը 12:26-ին: Բանակցությունների արդյունքում «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն և «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն ներկայացրել են նոր գնային առաջարկներ՝

Չափաբաժին 1				
Հ/Հ	Մասնակիցներ	Մասնակցի հայտով ներկայացված գները/ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ	3 200 000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/	0/զրո/	3 200 000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/

2	«Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ	4 690 000 /չորս միլիոն վեց հարյուր իննսուն հազար/	0/զրո/	4 690 000 /չորս միլիոն վեց հարյուր իննսուն հազար/

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից, ինչպես նաև կազմել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագրի նախագիծը ուղարկել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին /անգործության ժամկետ 5 օր/:

vii. www.gnumner.am համացանցային կայքում 05.04.2022թ.-ին հրապարակվել է «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

viii. Հանձնաժողովի 04.04.2022թ.-ին կայացված բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը չի տրամադրվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 08.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ բացառելով նաև միավոր գումարի նշումը: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային

պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից Արթիկ համայնքի մի շարք բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման ծառայության ձեռքբերման նպատակով 22.03.2022թ.-ին հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ

գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն, որին ի թիվս այլ ընկերությունների, հայտ են ներկայացրել նաև «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն: Հանձնաժողովի 01.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ, որը տեղի կունենան 04.04.2022թ.-ին: Հանձնաժողովի 04.04.2022թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ բանակցություններին ներկայացել է «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն, իսկ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն չի ներկայացել, սակայն բանակցային գնային առաջարկը ներկայացրել է Արթիկ համայնքի էլեկտրոնային artikgnumner@mail.ru հասցեին ժամը 12:26-ին: Բանակցությունների արդյունքում «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն և «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն ներկայացրել են նոր գնային առաջարկներ, որի հիման վրա, նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը որոշել է «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից: www.gnumner.am համացանցային կայքում 05.04.2022թ.-ին հրապարակվել է «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Հանձնաժողովի 04.04.2022թ.-ին կայացված բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը չի տրամադրվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Բողոքներ քննող անձին չներկայացնելով վեճի առարկա հանդիսացող բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը, խախտել է Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները, հակառակ դեպքում, եթե բանակցությունների նիստը չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել, ապա Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթների խախտում: Նման պայմաններում (նշված երկու դեպքում էլ), առանց բանակցությունների նիստի տեսաձայնագրության կամ ձայնագրության, Բողոքներ քննող անձը փաստում է, որ անհնարին է հաստատված համարել կամ հերքել բողոք ներկայացրած անձի և պատվիրատուի կողմից սույն բողոքարկման ընթացակարգում ներկայացված իրավական ու փաստական հանգամանքները:

Հատկապես, երբ այդ փաստական տվյալները վերաբերում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներին, ըստ այդմ՝ վերջիններիս կամքի արտահայտման ձևին և բովանդակությանը, որը սույն գործում առկա փաստական հանգամանքներով հնարավոր չէ պարզել՝ հենց ձայնագրության (տեսաձայնագրության) բացակայության պատճառով:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Սույն դեպքում, որպես որոշակի ապացույց, Պատվիրատուի կողմից չի ներկայացվել գնահատող հանձնաժողովի բանակցությունների նիստի տեսաձայնագրությունները կամ ձայնագրությունները, որն էական նշանակություն ունի սույն գործի քննության համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ գործին մասնակցող անձն իրավունք չունի ոչնչացնելու կամ թաքցնելու որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտելու դրա ձեռքբերմանը և հետազոտմանը՝ գործին մասնակցող մյուս անձանց համար անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը և ներկայացնելը: Նման փաստերի առկայության դեպքում ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները կրում է խոչընդոտող անձը:

Ընդ որում, եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գործով հաստատված փաստերի գնահատմամբ՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույթը, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում Հանձնաժողովը ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից Արթիկ համայնքի մի շարք բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման ծառայության ձեռքբերման նպատակով 22.03.2022թ.-ին հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում պետք է հրավիրի գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ, որպիսի պայմաններում

«Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն այս մասով հիմնավոր է և ենթակա բավարարման:

Վերոնշյալով պայմանավորված՝ այն որ Հանձնաժողովի կողմից պետք է հրավիրվի գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ, Ընկերության կողմից ներկայացված՝ վերջինիս հաղթող մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջը դառնում է առարկայազուրկ, ուստի ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրված նիստը պետք է այնպես կազմակերպվի ու անցկացվի, որպեսզի ապահովվի Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների դրույթներով սահմանված սկզբունքները: Այդ սկզբունքների հաշվառմամբ պետք է Հանձնաժողովի անդամներն ու նիստին ներկա մասնակիցները վարեն բանակցությունները: Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ պետական գնումների անհրաժեշտությունը պայմանավորված է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների պատշաճ իրականացման հրամայականով, և այդ գործընթացների անհարկի հետաձգումները կարող են արհեստական խոչընդոտներ ստեղծել նշված մարմինների ամենօրյա գործունեության համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 08.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/52 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

1. Պարտավորեցնել թիվ «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-22/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումը:

2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**